ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ «ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ»-ԻՆ

(15 մարտի 1998 թ.)

Մեծի Պահոց այս կիրակին մեր եկեղեցու մեջ ծանոթ է որպես «Տնտեսի կիրակի», որովհետև քիչ առաջ այս բեմից կարդացվեց ավետարանական մի այնպիսի հատված Ղուկասի Ավետարանից, ուր պատմվում էր Անիրավ տնտեսի առակը: Ես այդ առակը չեմ վերլուծելու այսօր, բայց ցանկանում եմ առակի կենտրոնական գաղափարը ձեր ուշադրությանը հանձնել և այդ իմաստի լույսի տակ վերակոչել և առ Աստված գոհություն մատուցել Գարեգին Պատրիարքի այն վաստակի համար, որ ընծայեց Աստծուն մեր եկեղեցու և մեր հայ ժողովրդի ծառայության միջից:

Տնտես:

Ով է նա: Ով էլ որ լինի, անկախ իր պաշտոնից, դիրքից, սեռից, ամեն ինչից առաջ նա մարդ է: Եվ մարդ՝ նշանակում է տնտես: Տնտեսը այն անձն է, որ ստանձնում է մի բան անելու և հաշիվ է տալիս նրան, ումից ստացել է այդ պատասխանատվությունը: Ավետարանում մի խոսք կար, որ շատ խորունկ իմաստ ուներ: Տան տերը կանչում է իր տնտեսին և ասում. «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ 2), տուր քո կյանքի պարտականության հաշիվը: Մեզանից յուրաքանչյուրին գալու է այդ հարցումը: Այդ հարցումը մենք տալիս ենք մեզ ամեն անգամ, երբ մենք անդրադառնում ենք, թե մենք ո՞վ ենք: Հողը, որից ծնվում ենք, մե՞նք ենք ստեղծել, ո՛չ: Ժամանակը, որի մեջ ապրում ենք, մե՞նք ենք ստեղծել, ո՛չ: Կյանքը, որ ապրում ենք՝ ո՛չ, շնորհները, կարողությունները, որ ընծին ունենք, մե՞նք ենք ստեղծել, ո՛չ: Այլ՝ Աստված:

Նրա տուրքն է: Մեր պարտքն է ոչ թե տաղանդ ստեղծել, այլ տաղանդ մշակել: Հողը ոչ թե փչացնել, այլ հողից կյանք դուրս բերել: Ժամանակը ոչ թե անիմաստ սպառել, այլ այն պետք է ի բարին օգտագործել: Մարդը Տիեզերքի մեջ տնտեսն է կյանքի Պարգևիչի, Աստուծո: Եվ նա, ով կմոռանա իր Տիրոջը, նա ինքը կփորձի դառնալ աստված, բայց արարածը չի կարող դառնալ արարիչ: Արարիչը Արարիչ է, արարածը՝ արարած, և արարածի մեծությունը իր արարչի պատկերը, տված բարիքները ապրել, արժեցնել ու բարիքի վերածելն է, իր ընտանիքի, հասարակության, ազգի, Աստուծո համար: Սա է այս կիրակիի օրվա խորհուրդը: Տեսեք, փակ է Մայր խորանը, որպեսզի ամեն մեկը իր հոգու մեջ սևեռի, իր կյանքի վրա կենտրոնացնի իր միտքը:

Մեծի Պահոց 40 օրերը ամբողջ աշխարհի եկեղեցիներում հատուկ շրջան է, ուր մարդն իր մասին է մտածում, ոչ թե խոսում ուրիշի մասին: Բա՛վ է խոսենք ուրիշների մասին, խոսենք մեզ հետ, այս պահին, երբ մենք տնտես ենք մեր կյանքում և ոչ թե կյանքի տերը: Ո՞վ է կարողացել հավերժացնել իր կյանքը ժամանակի մեջ: Կյանքը հավերժական է ժամանակից վեր եղող արժեքներով: Այս մտածումներն այսօր ձեզ եմ փոխանցում Ս. Ավետարանից և մեր հայրերի քրիստոնեական հավատքի ուսուցումներից և ուզում եմ այս ճշմարտությունների լույսի տակ տեսնել մեր սիրելի, անմոռանալի Կ. Պոլսի Պատրիարքի հիշատակը: Նա իր ամբողջ 70-ամյա կյանքը ապրեց իր եկեղեցու ծառայության մեջ: Կ. Պոլսի եկեղեցասիրական, ավանդապաշտ, եկեղեցակենտրոն կյանքի մթնոլորտում մեծացավ և ապա իր հոգևոր,

իմացական, աստվածաբանական կազմավորումը ստացավ Երուսաղեմի կրոնաբույր Քրիստոսակոխ այն սուրբ վայրերի մեջ, ուր մեր Հայոց Պատրիարքությունն է և Հայոց վարժարանը: Նրա կյանքը արժևորվեց երեք բնագավառներում: Այսօր Աստված նրան հարց է տալիս. «Տուր զհաշիւ տնտեսութեան քո»: Եվ նա ասելու է Աստծուն. Ով Տեր, ես գործեցի երեք բնագավառներում՝ վանքի, վանական մթնոլորտի մեջ, հովվական, վարչական, ծառայողական կյանքի մեջ և դաստիարակչական, կրթական ոլորտում: Նա եղավ վանքի մեջ իր սկզբնական կյանքում՝ Երուսաղեմում, ապա իր կյանքի վերջին շրջանին Կ. Պոլսո Պատրիարք լինելուց առաջ դարձյալ Երուսաղեմ գնաց և այնտեղ Պատրիարքից հետո ամենակարևոր պաշտոնն ստանձնեց՝ որպես լուսարարապետ Սրբոց Հակոբյանց վանքի: Եկեղեցական արարողությունները, հավաքական աղոթքը, ծիսական ավանդությունը նրա համար ապրում էր: Ես հիշում եմ նրան հիսուն տարիներից ի վեր, երբ դեռ սարկավագ էր. եկեղեցական արարողությունների կարգն ու կանոնը, ապրումները նա մեծապես գնահատում էր և սիրում էր Հայոց եկեղեցու ծեսը և ավանդությունը:

Նա գործեց հովվական, վարչական, կազմակերպչական, ժողովրդանվեր կյանքով: Իրրև հովիվ ԱՄՆ-ում, ապա Ավստրալիայում, ուր տարիներ շարունակ ծառայեց՝ կազմակերպելով այդ թեմը:

Նրա կյանքի երրորդ շրջանակը եղավ կրթական-դաստիարակչական գործը: Նա Կ. Պոլսի Ս. Խաչ Դպրեվանքի տեսուչը եղավ, ուսուցիչ՝ բազմաթիվ դպրոցներում: Նա իր կյանքի վերջին ութ տարիներն անցկացրեց Կ. Պոլսում միշտ արթուն, որ Հայց. եկեղեցու իրավունքները չկապտվեն Թուրքական իշխանությանց կողմից: Քանի անգամներ նա իր ձայնը բարձրացրեց որոշ անարդարությունների նկատմամբ, որոնք գործադրվում էին Թուրքական իշխանության կողմից՝ որպես ճնշում մեր Համայնքի վրա: Եվ եկեղեցիները պայծառ ու չեն պահեց իր օգնական հոգևորականների և նաև աշխարհական նվիրյալ անդամների հետ: Ահավասիկ մի տնտեսություն: Աստված իրեն կյանք տվեց, իր ձեռնադրության շնորհիվ եկեղեցական պաշտոն տվեց և նա այդ պաշտոնը արժևորեց, իմաստավորեց, այսօր ներկայանում է Աստուծո՝ խղճի պարտքը կատարած հոգևորականի հանդարտ հոգիով, և մենք չենք մոռանա նրա հիշատակը: Եվ այսօր Հոգեհանգստյան արարողությամբ և հետագային հատուկ հարգանքով բարձր կպահենք նրա հիշատակը: Վերջապես նա եղավ այստեղ, մեր ազգի քրիստոնյա ծննդավայրի մեջ, ի Ս. Էջմիածին:

Նա եղավ միշտ հավատարիմ այս Ս. Աթոռին: Այս տարի միայն երկու անգամ այցելեց՝ հակառակ իր առողջական վիճակին, և իր հոգու մեջ զգում էր այն խորհուրդը, որ կապված է Ս. Էջմիածի և նրա Ամենայն Հայոց Կաթողիկոսության առաքելությանը:

Մենք այսօր աղոթում ենք այստեղ մեր միաբանության անդամների և մեր բոլոր հավատացյալ ժողովրդի հետ, որ Աստված նրա հոգին երանական խաղաղության մեջ ընդունի: Եվ Կ. Պոլսո Պատրիարքությանը մաղթում ենք, որ լինի ամրացում, զարգացում, հոգևոր ծառայության մեջ հառաջդիմություն՝ վասն հոգևոր վայելման և բարիքին Թուրքիո Հայոց մեր ժողովրդին, որ այնքան կապված է Եկեղեցուն իր ամբողջ կյանքով: Աստված թող պահի կենդանի այս անքակտելի կապը անձի, ընտանիքի և մեր մեծ ընտանիքի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, փառք Հավիտյանս Հավիտենից. ամեն: